ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS

ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

ՍՊԱՌՈՂԸ ՇՈՒԿԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՆ Է

#2 ՀՈՒՆԻՍ 2020

Grand Candy

ՄԵՐ ՈՐԱԿԸ ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ Է

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լաբորատորիաների գծով փորձագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Տեղեկատվության վերլուծության պատասխանատու, Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
Լրագրող

ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան,
Բժշկական գիտությունների դոկտոր

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ,
Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՑՈԼՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ

ՀՈՒՇՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ

Հատվածներ Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենքից

Հոդված 19. Ոչ պատշաճ որակի ապրանքի փոխարինումը

- Սպառողի կողմից ապրանքի թերությունների հայտնաբերման և այդպիսի ապրանքի փոխարինման պահանջ ներկայացնելու դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը նշված պահանջի ներկայացման օրից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների կողմից այդպիսի ապրանքի որակի լրացուցիչ ստուգման անհրաժեշտության դեպքում՝ նշված պահանջի ներկայացման օրից՝ քսան օրվա ընթացքում:

Վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների մոտ նշված պահանջի ներկայացման օրը փոխարինման համար անհրաժեշտ ապրանքի բացակայության դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը՝ նշված պահանջի ներկայացման օրից՝ երկամսյա ժամկետում: Սպառողի պահանջով վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինման ընթացքում ժամանակավոր օգտագործման համար սպառողին անհատույց հանձնել երկարատև օգտագործման նմանօրինակ ապրանք՝ ապահովելով իր հաշվին տեղ հասցնելը: Այս կանոնը չի տարածվում այն ապրանքների վրա, որոնց անվանացանկը սահմանվում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Ապրանքների սեզոնային ներկրման շրջանների համար ապրանքի փոխարինման սպառողի պահանջը ենթակա է բավարարման սպառողի դիմումով այն ժամկետում, որն անհրաժեշտ է այդ շրջաններ համապատասխան ապրանքը հերթական տեղ հասցնելու համար, եթե վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները նշված պահանջի ներկայացման օրը չունի փոխարինման համար անհրաժեշտ ապրանքը:

- Ոչ պատշաճ որակի ապրանքը պետք է փոխարինվի նոր ապրանքով, այսինքն՝ չօգտագործված ապրանքով: Ապրանքի փոխարինման դեպքում երաշխիքային ժամկետը հաշվարկվում է նորից՝ ապրանքը սպառողին հանձնելու օրից սկսած:

Բոլոր մասնակիցներին կտրամադրվի մամլո հաղորդագրության ձևանմուշ, որը կարելի է օգտագործել տեղական լրատվամիջոցներում և կայքերում: Քարոզարշավ իրականացնելու վերաբերյալ տվյալները ներկայացնելու համար գործում է wcrd@consint.org էլհասցեն:

Հոդված 23. Պատշաճ որակի ապրանքը փոխարինելու սպառողի իրավունքը

1. Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը նմանօրինակ ապրանքով այն վաճառողի մոտ, ումից ձեռք է բերել ապրանքը կամ վաճառողի կողմից հայտարարված այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձևով, եզրաչափերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ, բացառությամբ կառավարության սահմանած անվանացանկով ապրանքների: Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը տասնչորս օրվա ընթացքում՝ չհաշված գնման օրը, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված ապրանքային կամ դրամարկղային չեկը:

2. Եթե սպառողի՝ վաճառողին դիմելու օրը վաճառքում նմանօրինակ ապրանքը բացակայում է, ապա սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ լուծել առուվաճառքի պայմանագիրը և պահանջել վերադարձնել նշված ապրանքի համար վճարված գումարը կամ փոխարինել այն նմանօրինակ ապրանքով՝ վաճառքում համապատասխան ապրանքի առաջին իսկ ստացման դեպքում: Վաճառողը պարտավոր է ոչ պարենային ապրանքի փոխարինումը պահանջող սպառողին հայտնել վաճառքում այդ ապրանքի ստացման մասին:

3. Կրեդիտի միջոցով, այդ թվում՝ վարկային քարտի օգնությամբ ձեռք բերված ապրանքը վերադարձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2020 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սպառողների ազգային ասոցիացիայի «50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում 2020 թ. երկրորդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունները վերաբերում են հացաբուլկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքի, հյութերի և ըմպելիքների, պաղպաղակի, մսամթերքի, թռչնամսի և ձվի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, խոհարարական կիսապատրաստվածքների, հանրային սննդի, նաև բուսական և կենդանական յուղերի արտադրման և իրացման ոլորտներին:

Հաշվի առնելով, որ այս եռամսյակում, պայմանավորված կարանտինային իրավիճակով, նպատակահարմար չգտանք այցելել արտադրական ձեռնարկություններ, հետևաբար ուսումնասիրել ենք մոտ 100 մեծ ու փոքր առևտրային կազմակերպություն և հետահայ կարգով մոտ 15 սննդի արտադրական ձեռնարկություն:

Այս օրերին համաճարակի տարածումը կանխելու նպատակով հայրենական գրեթե բոլոր արտադրողներն աշխատում են արտակարգ ռեժիմով: Նախքան գործարանի տարածք մուտք գործելը կատարվում է բոլոր աշխատակիցների ջերմաչափում, տրամադրվում են դիմակներ, ախտահանիչ նյութեր և ձեռնոցներ: Հատուկ նյութերով օրը մի քանի անգամ ախտահանվում են արտադրամասերը, թեև, հանուն ճշմարտության պիտի ասել, որ անկախ իրավիճակից, բոլոր ընկերությունների բոլոր արտադրամասերում ախտահանման գործընթացն ամենօրյա աշխատանքի կարևորագույն մասն է:

ՀԱՑԱԲՈՒԼԿԵՂԵՆԻ, ԱԼՐԱՅԻՆ ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտը մշտապես Ասոցիացիայի ուշադրության կենտրոնում է: Կան թերացումներ, մասնավորապես՝ սպառողը չի տեղեկացվում, թե տվյալ հացը որ տեսակի ալյուրից է թխված, որքան են քաշը, խոնավությունը և այլն:

Իրացվում է նաև անհայտ ծագման հացաբուլկեղեն՝ դարձյալ չմակնշված:

Մտահոգող է, որ որոշ արտադրամասերում շարունակվում է հաց արտադրվել ոչ բարվոք հակասանիտարական պայմաններում, ոչ բոլոր աշխատակիցներն են բուժզննում անցնում, և ոչ միշտ են արտադրման պրոցեսն իրականացնում մասնագիտական որակավորում ունեցող հրուշակագործները: Երբեմն ձեռք բերված հումքը չի ունենում համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:

Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ վերոնշյալ թերացումներով շարունակում են գործել «Գեղամ Մուրադյան» («Գեղամա» ապրանքանիշ), «Հեկտոր Մանվելյան», «Միրաժ», «Ալվարդ Մարգարյան», «Գալյա Բաղդասարյան», «Լիզա Վարդանյան», «Վարդան և Մոնիկա», «Էդուարդ Մինասյան», «Սուսաննա Շահինյան», «Արմեն Հովհաննիսյան», «Վարազդատ Մանուկյան», «Տորթեր Մարինայից», «Էմ ընդ Կա», «Արմինաշող» և այլ ընկերություններ:

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ընկերությունը շաքարային և ալրային հրուշակեղենի արտադրության ոլորտում լավագույնն է, որը տարածաշրջանում շոկոլադի հումք կակաո ռունդերի ներկրողն է: Այս ընկերության շոկոլադային ապրանքատեսականին համարվում է լավագույններից:

«Գրանդ Քենդին» լայնորեն սպառվում է սեփական առաքման մանրամեծածախ ցանցի միջոցով՝ իր արտադրանքն առաքելով հանրապետության 7500 առևտրի կետեր: Արցախում ու Երևանում գործում է 22 ֆիրմային խանութ, ինչի շնորհիվ ընկերության արտադրանքը միշտ թարմ է հասնում սպառողին:

«Գրանդ Քենդի» ընկերությունն արտադրում է ա-

վելի քան 400 անուն արտադրատեսակ, այդ թվում՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներ: Մեծ պահանջարկ ունեն հատկապես պաղպաղակե տորթերը՝ նախատեսված հատուկ տոնական միջոցառումների համար:

Ժամանակակից տեխնոլոգիաներով և իտալական սարքավորումներով հագեցած արտադրամասում արտադրվում է սուրճ, որի համար, որպես հումք, օգտագործվում են արաբիկա և ռոբուստա սուրճերի ամենաբարձրորակ տեսակները: Ընկերությունն արտադրում է նաև սառը սուրճ և 3 տեսակի սառը թեյ՝ դասական սև, կիտրոնով և դեղձի համով:

«Գրանդ Քենդիի» խմորեղենների տեսականին ներառում է մրգային, մեղրային, ընկուզային և շոկոլադե հավելումներով ավանդական տորթեր, քաշային և հատային խմորեղեն: Արտադրման ընթացքում օգտագործվում է բացառապես բնական թարմ հումք՝ սերուցքային կարագ, բարձրորակ ալյուր, հատընտիր ընկուզեղեն, թարմ հավկիթ, մեղր, թարմ մրգեր, բնական շոկոլադ, կակաո փոշի և այլն: Հատուկ հանդիսությունների համար առաջարկվում են «Ֆուրշեթ» հավաքածուները:

Հայկական շուկայում լավագույնն են «Գրանդ Քենդիի» կարամելի տեսականին (սառնաշաքարային, մրգային, կաթնային, ընկուզային, շոկոլադապատ և այլն), դրաժեի տեսականին (շոկոլադապատ և շաքարային ջնարակով պատված), շոկոլադե ջնարակով պատված մրգերի չրերը, պրալինե, վաֆլե և կրեմային շոկոլադե կոնֆետները, կոնֆետների ընտրանին, շոկոլադե սալիկները՝ պատրաստված բարձրորակ կակաո-հումքից և բնական զանազան հավելումներից, դառը շոկոլադե սալիկների տեսականին՝ 60, 70 և 80 տոկոս կակաո մթերքի պարունակությամբ:

«Գրանդ Քենդիի» արտադրությունը սերտիֆիկացված է ISO 9001:2015 որակի կառավարման և ISO 22000:2005 սննդի անվտանգության կառավարման չափանիշերով: Ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական հումքն է: Այն մանրազնին ստուգման է ենթարկվում նրա կենտրոնական լաբորատորիայում, որը հավաստագրված է ՀՍ ISO 17025:2005 ստանդարտի համաձայն: 2019 թվականի ապրիլին ընկերությունը սերտիֆիկատ է ստացել նաև սննդի արտադրանքի անվտանգության կառավարման FSSC 22000V4.1. ստանդարտներին համապատասխան:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Ազգային ապրանքանիշ և սպառման առաջատար» ու «Պահանջարկի առաջատար և որակի չափանիշ» անվանակարգերում «Գրանդ Քենդի» ընկերությանը շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

Վերջին շրջանում կորոնավիրուսի դեմ մղվող պայքարից անմասն չեն մնացել նաև բարերարներ Միքայել և Կարեն Վարդանյանները, որոնք 100 մլն դրամ են փոխանցել կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմանը և հաղթահարմանն ուղղված գանձապետական հաշվին, ապա նաև՝ 200 մլն դրամ այն բուժաշխատողներին, որոնք կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի առաջնագծում փրկում են հազարավոր կյանքեր: Երևանի և մարզերի հազար բուժաշխատողից յուրաքանչյուրի հաշվին փոխանցվել է 200,000-ական դրամ:

ԿԱԹ-ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների կատարած մշտադիտարկման արդյունքներով ըստ իրացման ծավալների լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- **Աշտարակ-Կաթ,**
- **Չանախ,**
- **Բանդիվան կաթ,**
- **Թամարա:**

ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Աշտարակ-Կաթ» ապրանքանիշը Հայաստանում որակյալ կաթնամթերք և պաղպաղակ արտադրողների շարքում առաջատարներից է: Ընկերության արտադրատեսականին հայտնի է կայուն և բարձր որակով:

«Աշտարակ-Կաթի» արտադրանքը բարձր և արժանի գնահատական է ստանում ոչ միայն ՀՀ-ում, այլև որակի չափանիշներ սահմանող օտարերկրյա հեղինակավոր կազմակերպությունների կողմից:

Սոցիոլոգիական հարցումների և փորձագիտական գնահատման արդյունքում «Աշտարակ-Կաթն» արժանացել է «Որակյալ կաթնամթերք արտադրող տարվա ընկերություն» անվանակոչմանը:

«Աշտարակ-Կաթի» դերը բարձր է գնահատվում նաև բանակաշինության գործում, որտեղ ակտիվ մասնակցություն է ունեցել ինժեներական և այլ աշխատանքներին, ինչի համար ՊԲ-ի և ՊՆ-ի կողմից երեք տարի անընդմեջ արժանացել է տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի:

ՉԱՆԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Չանախ» ընկերությունը սպառողին մշտապես ներկայանում է սննդարար և առողջարար կաթնամթերքի մեծ տեսականիով՝ մածուն, կաթնաշոռ, կաթ, թան, թթվասեր և այլն, որոնք բոլորը համապատասխանում են Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման և լաբորատոր փորձաքննության չափանիշերին: «Չանախն» արտադրում է նաև «Նանե» ապրանքանիշով ացիդոֆիլային մածունը, կեֆիր և «Անուշիկ» ապրանքանիշով մածուն ու թթվասեր: Այսօր հայրենական շուկան համալրված է նաև «Չանախ» ապրանքանիշով տարբեր յուղայնությամբ կաթնաշոռներով և հերմետիկ փաթեթավորմամբ կաթով: «Չանախ» ընկերությունն արտադրությունն իրականացնում է եվրոպական հոսքագծերով, որոնցով վերջերս արդիականացվել են ընկերության արտադրամասերը:

Հարկ է նշել, որ «Չանախ» ընկերությունը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում մակնշման գործընթացին:

ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բանդիվան կաթ» ընկերությունն ընձեռում է իր ապրանքատեսականին գնելուց առաջ համտեսելու հնարավորություն: Այս ընկերությունը, որի նպատակը մեկն է՝ ապահովել սպառողին բարձրակարգ կաթնամթերքով, միակն է Հայաստանում, որ պանիր է արտահանում Իսրայել:

Ընկերությունն իր հարազատ գյուղում հիմնել է խոզաբուծական և կովաբուծական ֆերմաներ, կաթնամթերքի և պանրի արտադրություն՝ ստեղծելով մեծաթիվ աշխատատեղեր:

«Բանդիվան կաթի» տեսականին մեծ է ու բազմազան՝ խնոցու կարագ, պանիրների լայն տեսականի պաստերիզացված կաթ, թթվասեր, կաթնաշոռ, մածուն: Տեսականին կարելի է ձեռք բերել նաև առցանց պատվիրելու միջոցով:

Ի դեպ, Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Բնական կաթնամթերքի արտադրության և տեղական բիզնեսի զարգացման լավագույն օրինակ» անվանակարգում «Բանդիվան կաթ» ընկերությանը շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

ԹԱՄԱՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Թամարա» ընկերության աշխատանքի հիմնական սկզբունքներից են առողջության համար անվտանգ արտադրանք ապահովելը, արտադրանքի որակի խիստ վերահսկումը, սպառողներին մշտապես նոր տեսականու մատուցումը:

«Թամարա» ընկերությունն ունի Միջազգային Ստանդարտների համապատասխանության վկայական՝ ISO 9002:98 (2000), ISO 9001:2002 (2003), ISO 9001:2008 (2013): Ապահովում է տարեկան միջինը 250 աշխատատեղ:

Ընկերությունն արտադրում է ավելի քան 90 տեսակ պաղպաղակ, պաղպաղակ-տորթեր, 15 անուն կաթնամթերք (կաթ, մածուն, քամած մածուն, յոգուրտ, թան, կեֆիր, կաթնաշոռ, թթվասեր, թթվասերային մթերք, կարագ, կաթի փոշի, պանիրների տեսականի և այլն):

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական սպառողական շուկայում հատկապես ամռան ամիսներին պաղպաղակի ոլորտում լավագույն արտադրողների շարքում են.

- **Գրանդ Քենդի,**
- **Աշտարակ-Կաթ**
- **Pink Berry,**
- **Թամարա ընկերությունները:**

Pink Berry ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Pink Berry ընկերությունն արտադրում է միջազգային ստանդարտներին համապատասխան պաղպաղակներ՝ պաղպաղակի արտադրության մեջ ստեղծելով նոր չափանիշեր: Հայաստանյան շուկայում Pink Berry-ն համագործակցում է բազմաթիվ սրճարանների հետ:

Շատ սիրված են հատկապես Մայոժնիները, Pinko-ն, Կոնը, Դոպինգը, Դիլիմը: Pink Berry ընկերության արտադրանքը վաճառվում է Երևան քաղաքի ամեն մի անկյունում, ինչպես նաև Գյումրի, Էջմիածին և Վանաձոր քաղաքներում:

ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում իրականացվող ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է իրացվել ոչ բավարար որակի մսամթերք, մասնավորապես՝ «Շիրվանյան և ընկերներ», «Գայանե-Ջամե», «Կարինե-Նարինե», «Սոս» և այլ ընկերություններ իրենց հիմնականում ոչ բարձր որակի արտադրանքն իրացնում են հեռավոր մարզերում՝ օգտվելով սպառողների սակավ իրազեկվածությունից:

Այս ընկերություններում ոչ պատշաճ սանիտարական վիճակ է, անձնակազմի բուժզննում չի կատարվում և այլն:

Երկրորդ եռամսյակում լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել հետևյալ ընկերությունները.

- **ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ,**
- **ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ,**
- **ԱԹԵՆՔ,**
- **ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ,**
- **ՑԱՐԻՑԻՆՈ (Царский продукт ապրանքանիշ),**
- **«ԱՐՄ ՄԻԹ» («Արմենիա մսամթերք» ապրանքանիշ),**
- **ԲԱԲԻԿ 90 («Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ),**
- **ԼՈՒՄԱ:**

ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բեկոն Պրոդուկտ» ընկերությունն իրականացնում է վերամշակված մսամթերքի և կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք: Նա առաջատարն է վերամշակված մսամթերքի շուկայում և աչքի է ընկնում միջազգային չափանիշերին համապատասխան տեխնոլոգիաներով, սարքավորումներով և ստանդարտներով: «Բեկոն Պրոդուկտը» հայկական շուկայում հանդես է գալիս համաշխարհային գաստրոնոմ մշակույթի լավագույն օրինակներով՝ պատրաստված ինչպես ավանդական, այնպես էլ իտալական, իսպանական, գերմանական տեխնոլոգիաներով:

Ընկերությունն աշխատում է ավստրիական և գերմանական սարքավորումներով, ISO 22 ստանդարտով:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Հաստատուն որակ և լավագույն մսամթերք» անվանակարգում «Բեկոն Պրոդուկտ» ընկերությանը շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

«Բեկոն Պրոդուկտը» ևս այս օրերին անմասն չի մնացել և Արզնիում բնակվող 20 ընտանիքների ապահովել է մսամթերքի փաթեթներով՝ վստահ, որ ամեն դժվարություն անցողիկ է, պետք է լինել լավատես և կանգնել այն մարդկանց կողքին, ովքեր, իրոք, ունեն դրա կարիքը:

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բարի Սամարացի» ընկերությունն անում է հնարավորինս, որպեսզի տնտեսական բարդ պայմաններում իր սպառողին առաջարկի բարձրորակ, համեղ և մատչելի արտադրանք: Նա ներկայացնում է սննդարար երշիկների ավելի քան երկու հարյուր տեսակ: Ընկերության արտադրանքի բարձր համային որակն ապահովվում է շնորհիվ միջազգային չափանիշերին համապատասխանող գերմանական և շվեյցարական ժամանակակից տեխնոլոգիաների:

Մսամթերքի արտադրման ոլորտում օգտագործվում են Եվրոպական և Ամերիկյան՝ մսի վերամշակման գերժամանակակից սարքավորումներ, ինչպիսիք են LASKA-ն, ALPINA-ն, HENDELMAN-ը, KREMER GREBE-ն, VEMAG-ը:

«Բարի Սամարացին» բազմիցս արժանացել է մի շարք մրցանակների:

«ՀԱՅ» ասոցիացիայի «Հայ տարեց» ծրագրի շրջանակներում «Բարի Սամարացին» արտակարգ դրության օրերին նվիրատվություն է կատարել մոտ 400 տարեցների:

ԱԹԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հայր և որդի Երիցյաններ» ընկերության կողմից 1993 թ. հիմնադրված «Աթենք» ընկերությունն այսօր շուկայում ներկայանում է ավելի քան 200 ապրանքատեսակով: Ուսումնասիրվում ու ներդրվում են առավել ժամանակակից սարքավորումներ, գործարկվում՝ նորանոր հոսքագծեր:

Հավատարիմ մնալով իր արժեքներին՝ ընկերությունը տարեցտարի ավելացնում է ֆիրմային խանութները, վաճառքի կետերը: Նրա ապրանքատեսակներին հասանելի է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում: Մատակարարումն ապահովում են առաքման բաժնի աշխատակիցները, ընկերության ավտոմեքենաները, որոնք հագեցած են մսամթերքի թարմությունն ու սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովող սարքավորումներով:

Ստեղծված իրավիճակում «Աթենք» ընկերությունը, կարևորելով համախմբումն ու միասնականությունը, պատրաստակամությամբ միացել է ճգնաժամի հաղթահարման գործին և մեկուսացած քաղաքացիներին սննդով ապահովելու ծրագրին:

ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Առդելիկատես» ընկերության արտադրամասերը բավարարում են սանիտարահիգիենիկ պահանջները, աշխատակիցները պարտադիր հագնում են աշխատանքային արտահագուստ: Գործարկվող սարքավորումները, փաթեթավորման պարագաները և հավելանյութերը հիմնականում ներմուծվում են իտալական, գերմանական, շվեյցարական ընկերություններից: Արտադրանքն իրացվում է և՛ հանրապետությունում, և՛ արտերկրում: Մասնավորապես՝ մայրաքաղաքում «Առդելիկատեսի» մսամթերքը կարելի է ձեռք բերել ընկերության արտադրամասին կից ֆիրմային խանութ-սրահից կամ այլ վաճառակետերից: «Առդելիկատես» ապրանքանիշով տեսականին ներառում է հում, եփած, ապխտած երշիկների մոտ 80, մսային կիսապատրաստվածքների մոտ 30 տեսակ, ինչպես նաև բաստուրմա, սուջուխ, սալյամի, սարդելկա, հոթ դոգի նրբերշիկներ և

ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Царский продукт ապրանքանիշ

«Ցարիցինո» մսամթերքի կոմբինատի արտադրանքն աչքի է ընկնում բարձր որակով և արտադրության ծավալներով: Միջազգային չափանիշերով կառուցված արտադրամասերում առկա են սանիտարահիգիենիկ գերազանց պայմաններ և լաբորատոր հսկողություն:

Ընկերության արտադրանքն իրացվում է համապատասխանության սերտիֆիկատով, համապատասխան սառնարան-ավտոմեքենաներով: Հումքը տեխնոլոգիական մշակումից առաջ և հետո ենթարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ տեխնոլոգիական գործընթացի բոլոր փուլերն իրականացվում են ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին, տեխնիկական հրահանգներին ու բաղադրագրերին համապատասխան:

«Ցարիցինո» ընկերությունը շուկայում ներկայանում է Царский продукт ապրանքանիշով: Մսամթերքի տեսականին բազմազան է:

ԱՐՄ ՄԻԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«Արմենիա մսամթերք» ապրանքանիշ

«ԱՐՄ ՄԻԹ» ՍՊԸ-ն կիրառում է նորագույն տեխնոլոգիաներ, ժամանակակից սարքավորումներ և ընդգրկում արտադրության գործընթացում ոլորտի լավագույն մասնագետներին: Գործարանը հագեցած է եվրոպական արտադրության նորագույն սարքավորումներով, օդափոխության համակարգով և լաբորատորիայով:

Ընկերությունը սպառողին է ներկայանում լայն տեսականիով՝ եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկաներ, կիսաապխտած երշիկներ, կիսապատրաստվածքներ, ավանդական շարք, դելիկատեսներ, հում ապխտած երշիկներ: Ընկերությունն արտադրում է նաև 100 անուն այլ ապրանքատեսակ:

«ԱՐՄ ՄԻԹ»-ի ապրանքատեսականուն ծանոթ են նաև արտասահմանում, մասնավորապես՝ Վրաստանում: Արտադրվող ողջ տեսականին ունի պետստանդարտի կողմից սահմանված և հաստատված անհրաժեշտ տեխնիկական պայմանները:

ԲԱԲԻԿ 90 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ

«Բաբիկ 90» մսամթերքի կոմբինատում արտադրությունն իրականացվում է գերմանական և շվեյցարական սարքավորումներով՝ արտադրական գործընթացում մարդու միջամտությունը հասցնելով նվազագույնի: Այստեղ խստագույնս պահպանում են սանիտարահիգիենիկ բոլոր նորմերը: Օգտագործվում են ներմուծված միս և այլ հումք: Գործարանն ունի լաբորատորիա, որտեղ մշտապես ստուգվում են և հումքի, և պատրաստի արտադրանքի որակը:

Այսօր ձեռնարկությունում արտադրվում է մոտ 70 տեսակի մսամթերք, որն առկա է ոչ միայն հայկական շուկայում, այլև արտահանվում է մի քանի երկրներ: «Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշով մսամթերքի տեսականին ներառում է վետչինա, սարդելկա, նրբերշիկ, սուջուխ, բաստուրմա, ապխտած, եփած, կիսաապխտած, հում ապխտած երշիկների տեսականի, ապխտած մսի տեսականի՝ ֆիլե, բուժենինա, բեկոն, խոզի կողեր, կիսապատրաստվածքներ՝ քյաբաբի ֆարշ, սառեցրած քյուֆթա, սառեցրած քյաբաբ, աղացած միս, ապխտած հավ, ջերքի:

ԼՈՒՄԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Լումա» ընկերության արտադրական ծավալները փոքր են, սակայն նրա արտադրանքը որակյալ է, համեղ և մակնշմամբ բավարարում է օրենքով ներկայացվող պահանջները: «Լումա» ապրանքանիշով տեսականին բազմազան է: Գործարանում արտադրվում են հում, ապխտած, եփած երշիկների տեսականի, նրբերշիկ, սարդելկա, բաստուրմա, սուջուխ և այլն: Ընկերության նպատակը մեկն է՝ բնակչությանն ապահովել որակյալ արտադրանքով:

ԹՌՉՆԱՄՍԻ ԵՎ ՁՎԻ ՈԼՈՐՏ

Բնագավառում իրացման ծավալների պակաս չի զգացվում, սակայն մեզ առավել հետաքրքիր են որակական ցուցանիշները: Հայտնի է, որ տեղական արտադրանքը պետք է ավելի որակյալ լինի, քան ներկրվածը (հիմնականում հորմոններով հարստացված): Ցավոք, մեզ դեռ հայտնի չեն տեղական թռչնամսի և ձվի որակական տվյալները և ներկրված թռչնամսի բաղադրությունը (հավելանյութեր, հակաբիոտիկներ և այլն):

ՀՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ցավոք, այս բնագավառը ռիսկային է, որովհետև գազավորված և զովացուցիչ ըմպելիքների, ինչպես նաև մի շարք հյութերի արտադրության մեջ շարունակում են օգտագործվել բազմաթիվ հավելանյութեր, սննդային ներկանյութեր, կայունացուցիչներ, փոխարինիչներ (ասպարտամ և այլն), որոնց մասին գրեթե չի մակնշվում:

Առայժմ մենք ձեռնպահ ենք մնում ոլորտի լավագույն տասնյակում ընդգրկել տեղական որևէ արտադրողի, քանի դեռ հստակեցված չեն մակնշումն ու օգտագործվող հավելանյութերի թույլատրելիության չափը:

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել «Շամպայն գինիների գործարանը» և «Պռոշյանի կոնյակի գործարանը»:

ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Իր տեսակի մեջ եզակի Երևանի շամպայն գինիների գործարանը վաղուց դարձել է ազգային ապրանքանիշ: Հենց այստեղ է արտադրվում շամպայն գինիների ողջ տեսականին ֆրանսիական տեխնոլոգիայով՝ դասականից մինչև հավաքածու: Գործարանում արտադրվում են նաև 3-15 տարվա հնացման կոնյակներ: Համի և որակի գաղտնիքը պայմանավորված է միջազգային չափանիշերին համապատասխան արտադրության տեխնոլոգիայով, որակի հսկման լաբորատորիայով, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Գինու արտադրության համար ընտրվում են ՀՀ տարբեր շրջաններում աճեցվող խաղողի լավագույն տեսակները:

Գործարանի արտադրանքը սերտիֆիկացված է: Տեսականին ներառում է՝ շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կիսաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Կարմիր խաղուն գինի «Տիգրան Մեծ», Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր), խաղողի գինիներ (Ֆրանս, Վայք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերածնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր), մրգապտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի

գինի, Սև հաղարջ, Միկադո (Սալորի կիսաքաղցր գինի), կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Շամպայնագործության մեջ որակի և նրբահամության ՀՀ պատվիրակ ամբողջ աշխարհում» անվանակարգում «Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ին շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պռոշյանի կոնյակի գործարանի տեսականին ունի բարձր որակ, ներկայանալի տեսք և հրաշալի համային հատկանիշներ՝ պայմանավորված պարբերաբար ներդրվող նորագույն տեխնիկական միջոցներով, հմուտ և փորձառու մասնագետների աշխատանքով:

Գործարանում արտադրվում են 3-30 տարվա հնության հայկական կոնյակներ (Մանե, Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի, Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուհի, Խենթ և այլն)՝ պատրաստված Արարատյան դաշտի խաղողի լավագույն տեսակներից, լիկյորներ ու նորագույն տեխնոլոգիաներով արտադրված լավագույն մրգային՝ նռան, սալորի, սև հաղարջի, բալի, ծիրանի, սերկևիլի, մոշի գինիներ: Գործարանի բարձրորակ արտադրանքն իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Լեհաստանում և այլուր:

Այսօր պահանջված ու սիրված է նաև Պռոշյանի կոնյակի գործարանի հայկական ավանդական բաղադրատոմսերով պատրաստված «Ռոյալ» ապրանքանիշով պահածոյի տեսականին:

Պահածոները մեծ պահանջարկ են վայելում նաև արտասահմանյան շուկայում: Տեսականին արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Միացյալ Նահանգներ, եվրոպական և Մերձբալթյան երկրներ, Ղազախստան:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Համի և որակի ազգային չափանիշ» անվանակարգում «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ին շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում յուղաճարպային բնագավառի առաջատար «Սանֆուդ» ընկերությունը սպառողին առաջարկում է հալած բուսական խառնուրդի, սփրեդի, մարգարինի, խմորիչի լայն տեսականի՝ ներկայանալով Իմպերիա վկուսա, Ցարսկայա, Մասելկո, Սոնյաչնա Դոլինա ապրանքանիշերով: Այս տարի բրիտանական ընկերության ուսումնասիրությունների արդյունքում ընկերությունն արժանացել է միջազգային ISO:22000 ստանդարտի հավաստագրի:

«Սանֆուդի» բարձր համային հատկանիշներով քիմքին հաճելի տեսականին միակն է տարածաշրջանում, որը պատրաստված է բացառապես բնական ճարպերից ու յուղերից, չի պարունակում կոնսերվանտներ և խոլեստերին:

Ժամանակակից, արդիական և գիտական ծավալուն տեխնոլոգիաներ, արտադրության, հայկական գործարար մշակույթի ընդլայնում, համագործակցություն հայ և արտերկրյա արտադրողների հետ: Սանֆուդի արտադրանքն արտահանվում է Վրաստան, Ռուսաստան և ԱՄՆ:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Լայն սպառում և պահանջարկի առաջատար» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Սանֆուդ» ընկերությանը:

Ինչպես հայրենական մի շարք այլ ընկերություններ, «Սանֆուդը» ևս, համաճարակային իրավիճակով պայմանավորված, օգնության ձեռք է մեկնել կարիքի մեջ գտնվող ավելի քան 1000 ընտանիքների, որոնք այս պահին հնարավորություն չունեն վերադառնալու աշխատանքի ու իրենց բնականոն կյանքին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ

Կորոնավիրուսով պայմանավորված՝ եռամսյակի ընթացքում հանրային սննդի ոլորտն աշխատել է ոչ լրիվ ծավալով, ուստի ուսումնասիրությունները լիարժեք չեն: Ամբողջական պատկերը կներկայացնենք ավելի ուշ, բայց մինչև այդ նշենք, որ նախորդ եռամսյակում թերացումներով աշխատող ընկերությունների մասին տեղեկությունները մնում են նույնը:

ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գազ սպառող բաժանորդների ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում, գազօգտագործող սարքավորումների կարգաբերում և վերանորոգում, արտահոսքի վերացում, ծխաօդատար համակարգի զննում, փականների քսայուղում, ձայնաազդանշանային անվտանգության համակարգի թեստավորում և այլն: Սրանք են «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության նպատակն ու առաքելությունը:

Այսօր «Էյ-Ի-Ջի-Սերվիսը» գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ունի 15 տարածքային և իրենց կազմում 36 տեղամասային ծառայություն, որոնք սպասարկում են ավելի քան 700 հազար բնակիչ-բաժանորդի և մոտ 6000 բաժանորդ-կազմակերպություն: Յուրաքանչյուր ամիս հանրապետության տարածքում իրականացվում է ավելի քան 100 հազար բաժանորդի ներտնային գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկում (մանրամասն՝ էջ 16):

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ ,Սպասարկման ոլորտում անվտանգության երաշխավորե անվանակարգում «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությանը շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԴԵ ընկերությունը, օգտագործելով շրջակա միջավայրը չաղտոտող, անվնաս նյութեր և համագործակցելով իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler, BUFA և այլ ընկերությունների հետ, իրականացնում է քիմիական և բնական մաքրում:

ՎԵՐԴԵ մաքրման սրահն իրականացնում է նաև առաքում: Հագուստը պատվիրատուի նախընտրությամբ փաթեթավորվում է ծալած կամ հատուկ կախիչներով:

Այստեղ հնարավոր է հագուստն անջրաթափանց դարձնել, ինչն օգնում է պաշտպանվել ջրից ու ձյունից, հետևաբար լավ է դիմակայում կեղտաբծերին ու լաքաներին: Այս գործընթացն իրականացվում է Seitz գերմանական ընկերության նյութերով:

Վարագույրների մաքրման դեպքում ՎԵՐԴԵ-ի աշխատակիցները կօգնեն ձեզ հանել վարագույրները, իսկ դրանք մաքրելուց, արդուկելուց և փաթեթավորված տեղափոխելուց հետո անհրաժեշտության դեպքում նաև կկախեն:

Գորգերի մաքրումը նույնպես խորհուրդ է տրվում վստահել ՎԵՐԴԵ մաքրման սրահին: Եթե գորգը շատ հին է և հատուկ արժեք ունի, ապա սրահի փորձագետները կմաքրեն այն Green Earth տեխնոլոգիայով, ինչի արդյունքում գորգը չի վնասվի և լիովին կպահպանի իր գույնն ու որակը:

ՎԵՐԴԵ սրահում նրբորեն ու խնամքով մաքրվում են նաև հարսանյաց և երեկոյան զգեստները: Այս դեպքում օգտագործվող հատուկ նյութերը չեն վնասում զգեստը՝ պահպանելով զարդարանքն ու գործվածքները:

Սրահն իրականացնում է այնպիսի թավշյա, կաշվե ու մորթե իրերի մաքրում, ինչպիսիք են վերարկուները, բաճկոնները, կոստյումները, ժիլետները, տաբատները, ձեռնոցները և այլն:

Եվ վերջապես, ՎԵՐԴԵ մաքրման սրահն իրականացնում է կաշվե հագուստի և իրերի ներկում: Գունապնակն ընդգրկում է 1000-ից ավելի գույներ, ինչը թույլ է տալիս ինչպես լիովին փոփոխել կաշվի գույնը, այնպես էլ այն դարձնել մեկ երանգով բաց կամ մուգ:

www.verde.am կայքում ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ
ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

ՎԻ-ԷԼ-ՎԻ-ն խոշոր, կենցաղային էլեկտրասարքավորումներ ներկրող ընկերությունն է: Բոլոր խանութները հագեցած են ամենաորակյալ, նորագույն սարքավորումներով, բազմազան ապրանքանիշերով: Վաճառասրահներ են գործում նաև մարզերում, ինչի արդյունքում Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում, Հրազդանում, Արցախում, Սևանում և այլուր սպառողը կարողանում է ձեռք բերել որակյալ տեխնիկա:

Իրենց ապրանքանիշերը ներկայացնելու բացառիկ հնարավորությունը ՎԻ-ԷԼ-ՎԻ-ին են վստահել աշխարհահռչակ ՀԱՅՍԵՆՍ, ՍՈՆԻ, ԴԵԼՈՆԳԻ, ՍԱՄՍՈՒՆԳ և այլ խոշոր ընկերություններ: Ընկերությունը հանդես է գալիս նաև ՎԻԿԱՍ սեփական ապրանքանիշով:

Անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին, կուտակային քարտեր և զեղչային ճկուն համակարգ, ավտոմեքենայի ամենամսյա խաղարկություն, անվտանգ առաքում. ահա այն ամենը, ինչ ունի սպառողը ՎԻ-ԷԼ-ՎԻ-ի շնորհիվ:

Ի դեպ, գնումներ կարելի է կատարել նաև առցանց թե ապառիկ, թե կանխիկ վճարումով և ստանալ հնարավորություն մասնակցելու Mercedes Benz ավտոմեքենայի խաղարկությանը:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Դինամիկ աճ և կայուն որակ» անվանակարգում «ՎԻ-ԷԼ-ՎԻ» էլեկտրատեխնիկայի խանութների ցանցին շնորհվել է «Սպառողի գնահատական» մրցանակը:

ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2011 թ. Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատի արժանացած հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն արտադրում է կապարաթթվային կուտակչային մարտկոցներ տարբեր ավտոմեքենաների համար: Ընկերության մարտկոցներն ունեն երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սպառողների ազգային ասոցիացիան, որ մշտապես հեռախոսային ու առցանց կապի մեջ է սպառողների հետ, ի թիվս այլ բողոքների, հատկապես արտակարգ իրավիճակով պայմանավորված այս օրերին ահազանգեր է ստանում՝ կապված առցանց առևտրի ու առաքման ծառայությունների հետ: Նշվում են թերություններ, որոնք կարող էին նաև չլինել, եթե առաքման ժամանակ չանտեսվեին պատասխանատվությունն ու բարեխղճությունը:

Մասնավորապես՝ թերություններով է աշխատել Supermarket.am կայքը, որը միևնույն հասցեից ստացված պատվերներից մեկը կատարել է բարեխղճորեն, սակայն մյուսի դեպքում պատվերը չեղարկել է՝ պատճառաբանելով, որ առաքում իրականացվում է միայն Երևանի տարածքում: Ի դեպ, պատվիրատուն ներկայացրել է փաստաթղթեր՝ ապացուցելու համար, որ առաքման հասցեն իսկապես Երևանի տարածքում է:

Ցավալի է, որ ոչ միայն ծառայությունները պատշաճ չեն կատարվում, այլև հեռախոսավարների վերաբերմունքն է կոպիտ ու անքաղաքավարի:

Այս և նմանատիպ այլ ծառայությունների վերաբերյալ գրեթե բոլոր բողոքներում սպառողները բարձրաձայնում են հետևյալ խնդիրները.

- առաքվող մթերքներում մեծ թիվ են կազմում այնպիսիք, որոնք ժամկետանց են, կամ ժամկետը շատ մոտ է սպառվելուն,
- առաքման համար ընտրվում են այնպիսի ապրանքներ, որոնց պահանջարկն այնքան էլ մեծ չէ, հետևաբար առաքումը հարմար առիթ է դրանցից ազատվելու,
- ինչպես շատ դեպքերում, այս օրերին ևս տարածվում է մոլորեցնող գովազդ, որտեղ առաքման ոչ բոլոր պայմաններն են տեսանելի և մատչելի ներկայացվում:

Սպառողների ազգային ասոցիացիան ևս մեկ անգամ կոչ է անում տնտեսվարող սուբյեկտներին պատճաշ կերպով կատարել իրենց պարտավորություններն ու հիշել՝ իրենք գործունեության շարժիչ ուժը միայն ու միայն իրենց վստահող սպառողն է:

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԿՐԿԻՆ ՄՇՏԱՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻՑ

Գրեթե բոլոր արտակարգ պատահարների հիմքում մարդկային գործոնն է, ինչը, ցավոք, անկանխատեսելի է: Թունավորումից, գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից խուսափելու համար պետք է պարզապես առավել զգոն լինել և խստորեն պահպանել գազի անվտանգության կանոնները: Գազասպառման համակարգի տեխնիկական պայմանների խախտումները, ինքնաշեն վառարանների տեղադրումը, գազասարքերի ինքնուրույն տեղափոխումը և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության փականագործի արձանագրած այլ խախտումները չվերացնելը կարող են դժբախտ պատահարի պատճառ դառնալ:

Որոշ դեպքերում դժբախտությունների պատճառ հանդիսացող շմոլ գազն անգույն է, հոտ չունի և անզեն աչքով հնարավոր չէ տեսնել կամ զգալ: Այն առաջանում է գազի թերայրումից, մինչդեռ այրման համար հարկավոր են գազ և թթվածին, մաքուր օդ: Շմոլ գազն առաջանում է թթվածնի պակասի դեպքում: Գազի թերայրում է առաջանում, օրինակ, գազօջախի այրիչները երկար ժամանակ միացրած թողնելու դեպքում, երբ սենյակը չի օդափոխվում, թթվածինը վերցնում է ներսից ու կատարվում է մաքուր այրում: Բնականաբար, թթվածինը կամաց-կամաց պակասում է, առաջանում է թթվածնային քաղց և արտադրվում բավականին թունավոր շմոլ գազ: Գազի ներտնային սպասարկման ձայնազդանշանային անվտանգության համակարգերի շուրջօրյա և անխափան աշխատանքը պարտադիր է:

Բնակչին թունավորումից և գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից պաշտպանելու նպատակով «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցների միջոցով տարածում է «Ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման» ուղեցույցներ և կոչ անում անպայման կարդալ և առաջնորդվել ուղեցույցում առկա տեղեկատվությամբ և հրահանգներով:

Ուղեցույցը ներկայացնում ենք ստորև:

ՀՀ տարածքում ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ,Գազպրոմ Արմենիաե ՓԲԸ (այսուհետ՝ Մատակարար) հանձնարարությամբ բաժանորդների ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման (այսուհետ՝ ՆՏԳՍՀ ՏՍ) ծառայության աշխատանքներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 15.10.2014 թ. № 383 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ)» պայմանագրի հավելված № 2՝ «ՆՏԳՍՀ ՏՍ ծառայությունների մատուցման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն, պլանային կարգով՝ տարեկան առնվազն երկու անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտապլանային՝ բաժանորդների կանչերով՝ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝Սպասարկող) կողմից:

Փականագործը պարտավոր է.

- ներկայանալ բաժանորդին անձը հաստատող վկայականով, դիտարկել գազիֆիկացման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը, փաստացի գազահամակարգը համեմատել նախագծի հետ և իրականացնել ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն,

- ստուգել և ապահովել գազասարքերի, ծխաօդատար համակարգի (ծխատար և օդատար ուղիներ, ծխատար խողովակներ, վերնափեղկ, օդի ներհոսքի բացվածք) ու գազասպառման անվտանգության ձայնազդանշանային համակարգի (ձայնազդանշանային սարք և գազամատակարարման ընդհատման ավտոմատ փակող կափույր, այսուհետ՝ ՁԱ համակարգ) միացումների ճշտությունը և ամբողջականությունը, սահմանված կարգով կատարել դրանց տեխնիկական սպասարկում,

ՀՈՐԴՈՐՈՒՄ Է
ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- բաժանորդներին հրահանգավորել՝ ներտնային գազահամակարգում բնական գազից ավտանգ օգտվելու պահանջների վերաբերյալ,
- ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ԱԿՏ-ում բաժանորդի հետ համատեղ հավաստել ծառայության մատուցման իրականացումը: ՆՏԳՍ համակարգում թերությունների խախտումների հայտնաբերման դեպքում կազմել համապատասխան արձանագրություն, գազասարքն անջատել, խցանային փականը խցափակել և կնքել: Բաժանորդին իրազեկել արձանագրված խախտումների վերացման հնարավոր տարբերակների և ժամկետների վերաբերյալ:

Հարգելի բաժանորդ

- դժբախտ դեպքերից զերծ մնալու համար պահպանեք կենցաղում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջները,
- առանց հսկողության մի՛ թողեք անվտանգության ավտոմատ համակարգեր չունեցող գործարկված գազասարքերը, դրանց երկարատև շահագործման ընթացքում հաճախակի օդափոխեք շինությունը,
- հնարավորության դեպքում լողասենյակներում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխեք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն (սենք),
- ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմե՛ք Մատակարարին կամ Սպասարկողին:

Չի՛ թույլատրվում

- անջատել գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ սարքն էլեկտրասնուցումից (ազդանշանիչի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան կազմում է ընդամենը՝ 8,64 կՎտ՝ շուրջ 400 դրամ),
- ինքնակամ փոխարինել, նորոգել և տեղափոխել գազասարքերը,
- գազօջախներն օգտագործել ջեռուցման նպատակով, դրանց վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ՝ առանց հավելյալ տակդիրի, քանի որ սահմանափակվում է այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքը, զարգանում է թերայրում (շմոլ գազի առաջացում),
- օդատար ուղիներին միացնել օդաքարշ կամ ծխատար, դրանք փակել լաթով կամ այլ առարկաներով,
- փակել օդափոխության ու գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի նպատակով նախատեսված՝ դռան տակի բացվածքը,
- սահմանափակել ծխահեռացման ուղիների անցողունակությունը (քարշը), օգտագործել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակներ և այլ խոչընդոտներ:

Կրկին հորդորում ենք անվտանգության սարքերը 24 ժամ շարունակ միացրած պահել, ինչը հնարավորություն կտա դժբախտ պատահարներից խուսափել:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.

- գազասարքն անսարք է, գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն (մրոտ) բոցով, կամ այն խզվում (կտրվում) է այրիչից,
- գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ համակարգը չի աշխատում կամ անսարք է,
- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը կամ առաջացել է ետքարշ:
- Ձայնային ազդանշանի միացման դեպքում հարկավոր է անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 հեռախոսահամարին:

Խորհուրդ չի տրվում.

- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,
- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

Անհրաժեշտ է.

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց մինչև 5 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,
- առատ ձյան և ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:

Արգելվում է.

1. Անջատել անվտանգության ազդանշանային համակարգը:
2. Կատարել գազահամակարգի ինքնակամ փոփոխություններ:

Գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային սարքի ազդանշանի՝ բնակարանում գազի հոտ զգալու, արտահոսքի, գազասպառման հետ կապված բնակիչների առողջական վիճակի վատթարացման (թունավորում, հրդեհ և այլն) կասկածների կամ այլ վթարային իրավիճակներում հարկավոր է.

- անհապաղ զանգահարել շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն 1-04 կամ ԱԻՆ 9-11 հեռախոսահամարներով,
- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,
- փակել գազասարքերի և սնող գազախողովակների խցանային փականները, բացել դռները և պատուհանները, օդափոխել շինությունը,
- զգուշացնել ընտանիքի անդամներին և հարևաններին, նրանց հանել անվտանգ և չգազավորված տարածք,

- գազի մուտքը բնակարան անվտանգության ավտոմատ կափույրի միջոցով փակելու դեպքում արգելվում է ինքնակամ գործարկել այն՝ առանց վերացնելու վթարային ազդանշանի պատճառը:

Ձեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, անսարք գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և կնքման աշխատանքներին,
- պոկեք խցափակման կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պատշաճ վիճակի պահպանման համար պատասխանատվություն է կրում բաժանորդը:

ՀԻՇԵՔ

Շնչել գազի 0.4-0.5 % առկայությունը շինությունում 10-15 րոպեի ընթացքում մահացու է:

Մի՛ մոռացեք, որ վթարի ժամանակ վտանգի եք ենթարկվում ոչ միայն դուք, այլև ձեզ շրջապատող մարդիկ:

Պահպանե՛ք ձեր առողջությունը և կյանքը:

Ժամանակին մասնագետներին դիմելը կօգնի ճիշտ ժամանակին հայտնաբերել խնդիրը, լուծել և հաղթահարել այն:

ՎՍՏԱՀԵՔ ՄԻԱՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ
AEG SERVICE
+ 374 (10) 23-93-27
+ 374 (10) 29-75-31
aeg@aegservice.am
www.aegservice.am

ՁԳՈՒՇԱՑԵՔ

ԲԱՐԱՑԱԿԱՆ

Համաճարակը հիվանդության միաժամանակ, զանգվածային ակտիվ բռնկումն է և անվերահսկելի տարածումն ամբողջ աշխարհում: Այն վերաբերում է միայն վարակիչ հիվանդություններին (ժանտախտ, խոլերա, գրիպ, այսօր արդեն ամբողջ աշխարհում հայտնի թագավարակ և այլն):

Այս դեպքում գրանցվում է վարակի փոխանցում հիվանդ մարդկանցից կամ հիվանդ կենդանիներից (վարակի աղբյուրից) առողջ մարդկանց, ինչի ընթացքի ոչ ճիշտ կարգավորումը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների (էպիդեմիա, պանդեմիա)՝ սպառնալով ողջ մարդկությանը:

Կախված երկրի զարգացման աստիճանից, առողջապահական համակարգի և տնտեսության վիճակից, նաև կառավարության արդյունավետությունից՝ տիրող իրավիճակն ու պայքարի մեթոդները տարբեր են: Ցանկացած համաճարակի բռնկում մեծ մարտահրավեր է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և մոլորակի բնակչության համար ընդհանրապես: Սա յուրօրինակ կոչ է բոլոր երկրների կառավարություններին, մասնավոր ընկերություններին համախմբվելու, փոխկապակցված գործելու և միահամուռ պայքարելու հիվանդության դեմ: Նույնիսկ ամենաբարձր պատերը չեն կարող կանխել կամ դադարեցնել վարակի տարածումը:

Ինչու է համաճարակը վտանգավոր

Ժամանակակից աշխարհում համաճարակը կարող է մեծ խնդիր լինել: Փաստն այն է, որ այսօր վիրուսները տարածման շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան նախկինում: Մարդիկ հեշտությամբ տեղափոխվում են մոլորակի մի ծայրից մյուսը, ավելացել է բնակչության խտությունը, աճել են սոցիալական կապերը: Բնակչությունը հիմնականում տեղաբաշխված է խոշոր քաղաքներում, ինչն առավել դժվարացնում է մեկուսացումը:

Հաջորդ պատճառը խուճապն է, երբ մարդիկ փորձում են հեռանալ բռնկման էպիկենտրոնից՝ առավել նպաստելով հիվանդության տարածմանը:

Նման հիվանդությունների պատվաստանյութ պատրաստելը կարող է տևել ամիսներ կամ տարիներ, համաճարակի օրերին բուժհաստատությունները ծանրաբեռնվում են, զգացվում է բուժանձնակազմի պակաս և այլն:

Ինչպես պաշտպանվել օդակաթիլային վարակներից (գրիպի տեսակներ, թագավարակ և այլն)

Համաճարակների ժամանակ վարակի ռիսկը նվազագույնի հասցնելու համար, բացի դիմադրողականությունը բարձրացնելուց, վիտամիններ ընդունելուց և պատվաստումից, պետք է ձեռնարկվեն նաև այլ կանխարգելող միջոցներ: Վարակները սովորաբար փոխանցվում են.

- փռշտալիս, հազալիս,
- նույն սպասքից օգտվելիս,
- նույն իրերն օգտագործելիս (բռնակներ, հեռախոսներ, վերելակի կոճակներ և այլն):

Ուստի հարկավոր է.

- օգտագործել բժշկական դիմակ և ձեռնոցներ,
- սահմանափակել կամ բացառել հանրային վայրերում գտնվելը,
- հնարավորինս հրաժարվել տրանսպորտային փոխադրումներից,
- այլոց հետ շփման ժամանակ, հատկապես հիվանդների հետ, պահել 1.5-2 մետր հեռավորություն,
- խուսափել ձեռքերով տրորելուց դեմքը, բերանը, աչքերը, ինչից կարող է վիրուսը ներթափանցել օրգանիզմ,
- պարբերաբար լվանալ կամ ախտահանել ձեռքերը և տեղանքը, որտեղ ամենաշատն եք լինում:

Ուշադրություն

1. Բժշկական դիմակը և ձեռնոցները նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար: Դրանք պետք է փոխել առնվազն երկու ժամը մեկ:

2. Գանգատների դեպքում պետք է բացառել ինքնաբուժումը: Հենց առաջին նշանների ժամանակ բժշկին դիմելը պարտադիր է:

Կյանքը համաճարակից հետո

Թվում է, թե կանցնեն օրեր, հնարավոր է՝ ամիսներ, ու երջանիկ ավարտը չի ուշանա: Ամեն բան կհարթվի ինքն իրեն, կյանքը կընթանա բնականոն հունով, ու մոլորակը կգրանցի հերթական հաղթանակը:

Բայց չմոռանանք, որ մի շարք մարտահրավերներ այդպես էլ չլքեցին մարդկությանը: Այսօր էլ չլուծված խնդիրներ են ՁԻԱՀ-ը, տուբերկուլյոզը, թագավարակը և այլն: Սրանց լուծումը պայմանավորված է ոչ թե հրաշքով, այլ պատասխանատու մարդու ամենօրյա քրտնաջան աշխատանքով:

Այս օրերի առողջապահական այս ահազանգը ևս լուծելի է բժիշկների նվիրվածությամբ և մոլորակի բնակչության համակարգված աջակցությամբ:

ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ժամանակակից բժշկության մեջ գրեթե անհնար է պատկերացնել բարձրակարգ ու անվտանգ բուժօգնության տրամադրումն առանց մեկանգամյա օգտագործման պարագաների ու գործիքների: Դրանք թեթև են, հարմար և կիրառվում են բժշկության բոլոր ճյուղերում (գինեկոլոգիա, օտորինոլարինգոլոգիա, սրտաբանություն, մանկաբարձություն, նյարդավիրաբուժություն, ուրոլոգիա և այլն), երբ անհրաժեշտ է ապահովել ախտորոշիչ կամ բուժական ընթացակարգերի առավելագույն հիգիենա, հատկապես երբ կա ուղիղ շփում:

Ոչ մեկանգամյա օգտագործման գործիքները յուրաքանչյուր օգտագործումից առաջ պահանջում են հատուկ ախտահանում, որի համար հարկավոր են հսկայական աշխատուժ, ստերիլ գործիքների պահպանման հատուկ պայմաններ և մեծ պատասխանատվություն բժշկական անձնակազմի կողմից: Այլ է մեկանգամյա օգտագործման արտադրանքի դեպքում, երբ ամեն ինչ շատ ավելի պարզ է: Բավական է միայն հանել ստերիլ փաթեթավորումը, օգտագործել ու դեն նետել:

Բժշկության մեջ առավել հաճախ կիրառվում են մեկանգամյա օգտագործման էնդոսկոպներ, ականջի ձագարներ, զոնդեր, սեղմիչներ, ունելիներ, կաթետրներ, սեղմիչներ, գինեկոլոգիական և օտոլարինգոլոգիական հայելիներ և այլն: Այս ցանկը բժշկության զարգացման զուգընթաց ավելանում է:

Առավելությունները

Մեկանգամյա օգտագործման միջոցների կիրառումը.

- չի պահանջում երկարատև նախապատրաստական աշխատանքներ օգտագործելուց առաջ և ախտահանումն ապահովող թանկարժեք սարքավորումներ,
- զգալիորեն նվազեցնում է վարակների տարածման հավանականությունը հատկապես, երբ շփումը բաց վերքերի ու հյուսվածքների հետ է,
- բարձրացնում է հիվանդի և բժշկի անվտանգությունը, պարզեցնում և արագացնում սարքավորումների նախնական պատրաստման և շահագործման գործընթացը,
- նվազեցնում է պահեստավորման և ախտահանման միջոցների ծախսերը:

Վնասները

Ինչպես ամեն բնագավառում, պոլիմերային նյութերն ու ապրանքները հեշտացնում են մեր կյանքը, սակայն այս դեպքում ևս այդ նույն նյութերը զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրին:

Մեկանգամյա օգտագործման խալաթներ

Սրանք օգտագործվում են ոչ միայն բժշկության մեջ, այլև մերսման սրահներում, սննդի արդյունաբերության ժամանակ և այլն: Սրանց ևս ներկայացվում են խիստ պահանջներ, որոնք են.

- թեթև, շնչող և հակաալերգիկ լինելը,
- հագնողի շարժումները չսահմանափակելը,
- առնվազն 5-6 աշխատանքային ժամ անվնաս ծառայելը և այլն:

Բժշկական դիմակներ

Սրանք ծածկում են կրողի բերանն ու քիթը՝ սահմանափակելով բնակչության շրջանում սուր շնչառական վարակների և գրիպի տարբեր տեսակների տարածումը:

Բժշկական դիմակներ օգտագործում են նաև բուժաշխատողները՝ մասնագիտական պարտավորությունները կատարելիս:

Եթե առօրյա կյանքում կարելի է օգտագործել ոչ ստերիլ դիմակներ, ապա բժշկության մեջ դրանց ստերիլությունը պարտադիր է:

Բժշկական դիմակի ստանդարտ չափը 17x9,5 սմ է, որոշ մոդելներ ունեն քթի հատվածում հատուկ սեղմակ, որպեսզի դիմակն առավել հարմարավետ նստի դեմքին: Նույն նպատակն ունեն նաև հատուկ ծալքերը:

Բախիլներ, ձեռնոցներ և գլխարկներ

Սրանք օգտագործվում են բժշկական այն հաստատություններում, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում մաքրության և հիգիենայի պահպանմանը, թեև դրանք կիրառելի են նաև տնային պայմաններում: Բախիլները, ձեռնոցները և գլխարկները հարմար են օգտագործելու համար նաև գեղեցկության սրահներում, հանրային սննդի կետերում, սննդի արտադրության մեջ, վաճառասրահներում և այլն:

Ուշադրություն

Բժիշկը պետք է ազնիվ լինի նախ և առաջ ինքն իր, ապա նաև այն հիվանդների հետ, որոնք օգնության համար դիմում են իրեն: Բժշկական գործունեության մեջ մեկանգամյա օգտագործման բժշկական սարքավորումների վերագործարկումը ոչ պրոֆեսիոնալ է, ապօրինի և անընդունելի:

ՈՒՂԵԾՈՒՅԺ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ

Առավելապես կենդանական սպիտակուցներով և ճարպերով, պարզ ածխաջրատներով սնվողների շրջանում սրտի իշեմիկ հիվանդությունների տարածվածությունը կրկնակի և մահացությունը եռակի բարձր է, մինչդեռ բանջարեղենով, մրգերով և բուսական ճարպերով հարուստ սնունդը 30-40 %-ով նվազեցնում է քաղցկեղով հիվանդացությունը: Սննդային բաղադրիչներ E և B6 վիտամինները, կալցիումը, սելենը և սոյայի սպիտակուցներն օժտված են որոշակի հակաքաղցկեղային հատկությամբ:

Գիտատեխնիկական առաջընթացի հետևանքով մարդու ֆիզիկական ծանրաբեռնվածությունը կտրուկ նվազել է, և գրեթե կրկնակի պակասել է օրգանիզմի էներգածախսը՝ հասնելով խիստ ցածր մակարդակի՝ 2000-2500 կկալ: Քաղաքակրթության առաջընթացի, սննդային տեխնոլոգիաների զարգացման և ռաֆինացված սննդամթերքի լայնորեն օգտագործման հետևանքով փոխվել է նաև ժամանակակից մարդու սննդի որակական կազմը՝ նրան գրեթե լիովին զրկելով, այսպես կոչված, «բալաստային» նյութերից՝ սննդաթելերից: Չունենալով էներգետիկ և կառուցվածքային նշանակություն, սննդաթելերը (ցելյուլոզա, հեմիցելյուլոզա, լիգնին, պեկտինային նյութեր, ջրալույծ պոլիսախարիդներ և այլն) մեծ դեր են խաղում մարդու օրգանիզմի բազմաթիվ ֆունկցիաների խթանման և կարգավորման գործում: Հայտնի է սննդաթելերի նշանակությունը հաստ աղիների քաղցկեղի և «քաղաքակրթության մի շարք հիվանդությունների»՝ ճարպակալման, շաքարախտի, սիրտ-անոթային և այլ հիվանդությունների կանխարգելման համար: Այսպիսով, սնունդը մարդու առողջությունը և նրա ակտիվ կյանքի առավելագույն տևողությունը պայմանավորող կարևորագույն գործոն է: Հետևաբար յուրաքանչյուր ոք պետք է տեղեկացված լինի առողջ սննդի, սննդամթերքի բաղադրակազմում եղած սննդանյութերի և օրգանիզմի կենսագործունեության համար դրանց ունեցած դերի մասին:

Առողջ սննդակարգը պարունակում է բազմազան սննդամթերքներ և սննդանյութեր՝ սպիտակուցներ, վիտամիններ, ճարպեր, ածխաջրեր և հանքային նյութեր, որոնց բավարար քանակն ապահովում է օրգանիզմի առողջ գործունեությունը: Հարկ է նշել, որ գոյություն չունի օրգանիզմին անհրաժեշտ բոլոր սննդարար նյութերը պարունակող սննդամթերք: Հետևաբար, ռացիոնալ կամ, ինչպես այժմ ընդունված է ասել, առողջ սննդի գրավականը օրվա կերակրացանկում սննդանյութերի բազմազանությունն է:

Միայն այդպիսի սնունդն է ի վիճակի ապահովելու օրգանիզմի պահանջները, նրա աճը, վերականգնողական գործընթացներն ու էներգետիկ ծախսերը:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԸ ԵՎ ԿԱՐՏՈՖԻԼԸ՝
ԱՌՈՐՅԱ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ ՀԻՄՔ

Հացի և հատիկային մթերքների սննդային արժեքն անգնահատելի է: Դրանք օսլայի, սննդաթելերի (բջջանք), սպիտակուցների, Բ խմբի վիտամինների, երկաթի և այլ հանքային տարրերի աղբյուր են: Սահմանափակումներ չկան, եթե հատիկային մթերքները պատրաստվել են առանց շաքար կամ յուղ ավելացնելու:

Հացահատիկը, մասնավորապես՝ հացը, հարուստ է բարդ ածխաջրատներով, որոնք հայկական սննդի կարևոր մասն են: Ավանդապես հայերը նախընտրում են սպիտակ հացը, հայկական լավաշը, կարտոֆիլն ու մակարոնեղենը: Իսկ ամենատարածված հացահատիկներն են բրինձը, ցորենի ձավարը, հաճարը, բլղուրը և եգիպտացորենը: Այս խումբը էներգիայի, բուսական ճարպերի, սպիտակուցի, որոշ վիտամինների և հանքային նյութերի հիմնական աղբյուրն է:

Ամբողջական հացահատիկը և դրանից պատրաստված մթերքները (մակարոնեղեն, հաց և այլն) ավելի առողջարար են, քան վերամշակված մթերքները, քանի որ ավելի հարուստ են բջջանյութով, Բ խմբի վիտամիններով և հանքային նյութերով: Վերամշակումը քայքայում է ցորենի մեջ գտնվող վիտամին Բ-ի կեսից ավելին, վիտամին Ե-ի 90 %-ը և, փաստորեն, հեռացնում է ամբողջ բջջանյութը, որը խթանում է աղիքների շարժման պրոցեսը և նպաստում նորմալ մարսողությանը: Հացահատիկը նվազեցնում է շաքարախտի, քաղցկեղի որոշ տեսակների ռիսկը, ինչպես նաև իջեցնում է խոլեստերինի քանակն արյան մեջ: Ստամոքսում բջջանյութը ուռչելով՝ բարձրացնում է կշտացման զգացումը և կանխում լրացուցիչ սննդի ընդունումը՝ նպաստելով մարմնի նորմալ քաշի պահպանմանը: Չվերամշակված հացաբույսերը չեն տարբերվում իրենց տեսքով վերամշակվածներից, ուստի պետք է ուշադրություն դարձնել, թե ինչ է գրված պիտակի վրա: Պետք է ընտրել այն հացահատիկը և մակարոնեղենը, որոնց պիտակների վրա նշված է՝ ամբողջական, կոշտ, չվերամշակված հացահատիկ (цельное, необработанное, whole grains):

ԽՈՐՀՈՒՐԴ ՍՊԱՌՈՂԻՆ

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՄՍԱՄԹԵՐՔ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ՝ ՄՍԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԹԵՐՔՆԵՐ

(ՁՈՒԿ, ՓՈՐՈՏԻՔ, ՀԱՎԿԻԹ, ԸՆԴԵՂԵՆ)

Մսամթերքը լիարժեք սպիտակուցների, երկաթի, ցինկի, B խմբի, ներառյալ B12-ը, վիտամինների աղբյուր է: Մսի առանձին տեսակներ պարունակում են մեծ քանակով հագեցած կենդանական ճարպաթթուներ և խոլեստերին (70 մգ %): Միսը պարունակում է ամենահեշտ ներծծվող և մարսվող երկաթը (Fe): Միսն ու մսամթերքները վիտամին B12-ի միակ աղբյուրն են, որը բուսական սննդամթերքները չեն պարունակում: Երկաթը և վիտամին B12-ը կարևորագույն, անփոխարինելի սննդանյութեր են, որոնք մասնակցում են արյունաստեղծմանը: Նրանց անբավարարության ժամանակ զարգանում է տարբեր բնույթի սակավարյունություն: Նիհար կարմիր միսը (մսատու կենդանիների լայնաձիգ գծավոր մկանները) շատ արժեքավոր և անհրաժեշտ սննդամթերք է: Նրանում ճարպի քանակը չնչին է: Խորհուրդ է տրվում միսը խաշել, շոգեխաշել, խորոված՝ խուսափելու համար յուղ ավելացնելուց, ինչն արվում է տապակելիս:

Կենդանական և որոշ բուսական ծագում ունեցող մթերքներ՝ միսը, թռչնամիսը, փորոտիքը (ենթամթերքներ), ձուկը, հավկիթը, ընդեղենը (լոբազգիները), ընկույզն ու պնդուկը սպիտակուցների գլխավոր աղբյուր են, ապահովում են օրգանիզմում յուրաքանչյուր բջջի և բոլոր հյուսվածքների առողջ գործունեությունը, ձևավորում մարդու կարևոր և հիմնական օրգանները, էնզիմների, արյան, բջջային թաղանթների և հորմոնների որոշ մասերը:

Հավկիթը նույնպես անհրաժեշտ, օգտակար և արժեքավոր սննդամթերք է: Այն պարունակում է լիարժեք սպիտակուցներ, երկաթ, կալցիում, A, B1, B2 և D վիտամիններ, անփոխարինելի կենդանական ճարպեր, օմեգա-3 ճարպաթթուներ: Սակայն հավկիթը հարուստ է խոլեստերինով (570 մգ %), ինչը զգալիորեն խաթարում է նրա սննդային արժեքը:

Որոշ բուսական մթերքներ՝ ընդեղենը (լոբազգիները՝ հատիկ լոբի, սիսեռ, ոսպ), ընկույզը, արախիսը, շագանակը, ինչպես նաև կտավատի, արևածաղկի, դդմի սերմերը բուսական սպիտակուցների հիանալի աղբյուր են: Ընկույզը և նրա շարքի մթերքները պարունակում են օմեգա-3 ճարպաթթուներ, բջջանյութ և հանքային նյութեր, ինչն ավելի է բարձրացնում նրանց սննդային արժեքը: Սակայն, հաշվի առնելով այս սննդամթերքների բարձր կալորիականությունը, պետք է չափավորել դրանց օգտագործումը:

Լոբազգիների սպիտակուցները ոչ լիարժեք են: Սրանք պարունակում են մարսողական ֆերմենտների արգելակիչներ և հատուկ շաքարներ, որոնք առաջացնում են գազեր և որովայնի փքվածություն: Սակայն լոբազգիների սիստեմատիկ օգտագործման պարագայում աղիները հարմարվում են ընդեղենի մարսմանը: Ընդեղենի ամենօրյա օգտագործումը ճանապարհ է հարթում առողջության համար:

ԵԶՆԱՐԳԵԼ ԴԱՇՏԱՅԻՆ

Ononis arvensis L.

Հայկական տարանունները – արորկալ, եզնկա, զողալ-փոշ, իշախոռն, լծարգել, կաղնուտ, օձիի, օձիուկ

Դեղաբույսի նկարագրությունը: Թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող 30-70 սմ բարձրության, բազմամյա, փշոտ խոտաբույս է՝ երկարավուն, ձվաձև տերևներով, վարդագույն, երկսեռ ծաղիկներով: Արմատն արտաքինից սպիտակ է, կտրվածքում՝ գորշ դեղնավուն, յուրահատուկ հոտով, դառը համով: Աճում է գետեզրերին, անտառի բացատներում, թփուտներում, ցրված կամ բուսուտների ձևով: Ծաղկում է ամռան ամիսներին, պտղակալում՝ օգոստոսից մինչև ուշ աշուն: Բույսը լուսասեր է, պահանջկոտ խոնավության նկատմամբ, լավ աճում է կրային, սև և ջրաբերուկային հողերում: Պտղակալում է կանոնավոր, ցրտադիմացկուն է:

Քիմիական բաղադրությունը: Բույսի բոլոր մասերը, հատկապես արմատը, պարունակում են սապոնիններ, գլիկոզիդներ (օնոնին, պսևդոօնոնին, օնոն) տրիտերպենային սպիրտ (օնոցերիլ) եթերայուղ, խեժ, դաբաղանյութեր, կիտրոնաթթու, օսլա:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով հիմնականում օգտագործում են արմատը, որը մթերում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, հանում բահով, մաքրում հողը, կտրում և հեռացնում վերգետնյա մասը, լվանում սառը ջրով և չորացնում լավ քամհարվող տեղում, կախված վիճակում կամ չորանոցում 40-50 աստիճանի պայմաններում: Աճը չվնասելու համար պտղակալած բույսերը թողնում են:

Եզնարգելը ժողովրդական բժշկության մեջ հայտնի է որպես միզամուղ և քրտնամուղ, արնահոսությունը դադարեցնող, ինչպես նաև ամոքող միջոց գլխացավերի, մարմնի ջարդվածության, ռևմատիզմի, մաշկային խրոնիկական ցանավորումների, ջրգողության, միզուղիների բորբոքումների և դրանց քարային ախտահարումների ժամանակ:

Կիրառման եղանակները: Եփուկ պատրաստելու համար 30 գ մանրացրած արմատը 1 լ ջրում եռացնել մինչև ծավալի կիսվելը, այնուհետև ֆիլտրել, ապա ընդունել 50-ական մլ (1/4 բաժակ) օրական 3 անգամ ուտելուց առաջ 2-4 շաբաթ տևողությամբ: Կամ 12 գ մանրացրած արմատը 20 րոպե եռացնել 200 մլ ջրում, ըմպել 1-ական ճաշի գդալ օրական 3-4 անգամ: Ջրաթուրմ պատրաստելու համար 1 ճաշի գդալ մանրացրած արմատը 15 րոպե թրմել 0,5 լ եռման ջրում, ըմպել օրվա մեջ 3-4 անգամ: Ոգեթուրմ պատրաստելու համար 20 գ մանրացրած արմատը 1 շաբաթ տևողությամբ թրմել 70 աստիճանի սպիրտի մեջ, ընդունել 40-50-ական կաթիլ (1 թեյի գդալ) ջրով օրը 3 անգամ:

Այլ օգտակար հատկանիշներ: Մատղաշ տերևներն ուտում են տապակած վիճակում: Ցողունները ու տերևները շիբի հետ խառնած գործվածքները ներկում են դեղին, իսկ երկաթարջասպի հետ խառնած՝ կանաչ գույն:

Արշավիր Թորոսյան
Հայաստանի դեղաբույսերը
Երևան, 1983

ԻՆՔՆԱԹԻՌՈՒՄ

ԿԱՄ ՕԴԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ

Ընդունված կարծիք կա, որ երեխաների հետ օդային ճամփորդությունն իսկական փորձություն է (նրանք գոռում են, հարվածում աթոռին, նետում խաղալիքներն ու սնունդը և այլն), սակայն փորձը ցույց է տալիս, որ մեծահասակները ևս շատ հաճախ հետ չեն մնում փոքրերից:

Բոլոր ժամանակներում մեզ սովորեցնում են վարվելակարգի և վարքի նորմերը հասարակական վայրերում, բայց քչերն են անդրադարձել, օրինակ, օդային ճանապարհորդությանը: Ուրեմն ինչ անել կամ չանել ուղևորությունն առավել հարմարավետ դարձնելու համար:

1. Ամեն ինչին պատրաստվեք նախապես, ծանոթացեք այն առարկաների ցանկին, որոնք կարող եք կամ չեք կարող տեղափոխել ձեզ հետ ինքնաթիռի սրահ: Ժամանակ չկորցնելու համար պատրաստ պահեք նաև անձնագիրն ու մյուս փաստաթղթերը:

2. Ձեռքի ուղեբեռը պետք է տեղավորել նստատեղի վերևի խցիկում: Եթե դա անելու համար անհրաժեշտ է ևս մի տարածք, պետք է սպասել, վստահ լինել, որ բոլոր ուղևորներն իրենց տեղերը զբաղեցրել են, բայց մնացել է ազատ խցիկ, որը կարելի է զբաղեցնել՝ ա-

ռանց որևէ մեկին անհարմարություն պատճառելու: Օգնեք ձեր հարևաններին, որոնց համար միգուցե դժվար է անձամբ տեղավորել սեփական ուղեբեռը:

3. Մի՛ աղմկեք, հետևե՛ք ձեր երեխաներին և եղե՛ք քաղաքավարի անծանոթների հետ: Եթե մտադիր եք թռիչքի ընթացքում զբաղեցնել երեխային, օրինակ, մուլտֆիլմերով, ուրեմն արեք դա միայն ականջակալներով, նույնիսկ եթե հարևանները չեն դժգոհում բարձր ձայներից:

4. Մի՛ հոգնեցրեք հարևաններին անդադար զրույցներով: Համաձայնեք, որ ձեր անձնական խնդիրները ոչ բոլորին են հետաքրքիր:

5. Նստատեղի թիկնակը կարգավորեք միայն հարևան ուղևորի հետ համաձայնեցնելուց հետո: Հնարավոր է, որ այդ պահին նրա սեղանիկին սնունդ կամ խմիչք կա:

6. Ոտքերով մի՛ հարվածեք դիմացի աթոռին: Դրանով անհարմարություն եք պատճառում հարևան ուղևորին, որ այդ պահին, հնարավոր է՝ քնած է:

7. Եղեք քաղաքավարի ուղեկցորդուհիների հետ: Եթե հարկավոր է կապվել նրանց հետ, արեք դա այն ժամանակ, երբ նրանք համեմատաբար քիչ են զբաղված, այսինքն՝ ոչ այն պահին, երբ, օրինակ, մատուցվում է սնունդ: Հիշեք, որ նրանց հիմնական խնդիրը ձեր անվտանգությունն ապահովելն է և ոչ թե ձեզ ծառայելը:

8. Հնարավորինս հրաժարվեք տնից բերած սննդից: Դրա հոտը հաճախ տարածվում է ամբողջ սրահում, հետևաբար կարող է նաև տհաճություն պատճառել այլոց: Սովորաբար սպասարկող ավիաընկերությունը կարգավորում է ուղևորների սննդի հարցը:

9. Հիգիենայի կանոնների պահպանումը պարտադիր է ոչ միայն սրահում, այլև սանհանգույցից օգտվելիս: Սա հատկապես խնդիր է երկարատև թռիչքների ժամանակ: Սակայն անձնական հիգիենայի պահպանումը բնավ չի նշանակում, ասենք, օծանելիքի շռայլում:

10. Հիշե՛ք, որ ինքնաթիռի սրահն անձնական տարածք չէ, այն հավասարաչափ պատկանում է բոլոր ուղևորներին:

11. Մի՛ հրեք մյուսներին, եթե անգամ ձեզ թվում է, թե նրանք չափից շատ դանդաղ են դուրս գալիս սրահից:

12. Մի՛ արգելափակեք ուղեբեռի գոտին: Լավ է ճամպրուկին սպասել փոքր հեռավորության վրա, որպեսզի մյուս ուղևորները ևս կարողանան տեսնել ամբողջ ժապավենը:



ՏՈՊԱԶԵՎԱՐՈՒՄՆԵՐ

Ամառ 2020

2020 թվականի ամառային նորաձևությունը մեկ բառով կարելի է բնութագրել որպես ծիածան: Ամենուր ծիածանի բոլոր երանգներն են, նաև դիզայներների երևակայության արդյունք բազմաձև բացվածքներ թևերին, լանջին, թիկունքին: Սա հնարավորություն է կանանց համար ցուցադրելու իրենք բոլոր բարեմասնությունները:

Կանանց հագուստներին առանձնահատուկ թեթևություն են հաղորդում ծոպերը և ծղոտե աքսեսուարները՝ գլխարկներն ու պայուսակները: Ամառային նոր մոդելները մեծ գրպաններով են, որոնք հագուստին փոքրինչ աշխատանքային տեսք են հաղորդում:

Պայուսակներ

Պայուսակների բազմազանությունը թույլ է տալիս ընտրել դրանք ըստ իրադարձության, տեղի, եղանակի ու տրամադրության:

Դարձնենք ամառն ավելի բազմազան ու գունագեղ պայուսակներով:

Կոշիկներ

Գեղեցիկ կոշիկները կարող են հրաշքներ գործել՝ կատարյալ լրացնելով կնոջ կերպարը և առանձնահատուկ հմայք հաղորդելով նրան: Հատկապես մեծ տեղ է տրվում սպիտակ մոդելներին, որոնք ամռան տապին հարվարավետ լինելու նպատակով ավելի լայն ու ազատ են, ոչ այնքան բարձր կրունկներով ու մեղմ աքսեսուարներով:

Դարձյալ առաջին տեղում հարմարավետությունն է: Սա նշանակում է մարզական կոշիկներ ամենուր և ամեն ինչի հետ:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Իհարկե, ոչ բոլոր տղամարդիկ են անհանգստանում իրենց արտաքին տեսքի համար: Նրանց հագուստի ընտրության հիմնական չափանիշը գործնականությունն է: Սա, ինչ խոսք, ընդունելի տարբերակ է, սակայն հագուստներ ունենալ տարբեր առիթներով հագնելու համար, ցանկալի է: Եվ արժի պարբերաբար թարմացնել զգեստապահարանը՝ այն համալրելով նորաձև հագուստով ու աքսեսուարներով:

Այս ամառ թրենդային են վարդագույնը, կապույտը, նարնջագույնը, սևն ու սպիտակը, ծաղկային մոտիվներն ու կենդանական նմուշները, թափանցիկ նյութերն ու անգամ ժանյակները:

Կոշիկներ

Երիտասարդների մեծ մասը փորձում է կատարյալ դարձնել իր արտաքինը, գնում է թանկարժեք վերնաշապիկներ, տաբատ՝ մոռանալով, որ ամեն բան կատարյալ է, երբ կատարյալ է ամբողջապես:

Ամառն այն ժամանակն է, երբ պետք է հագնել թեթև կոշիկներ, իսկ նորաձև մոդելների ընտրությունը մեծ է՝ ավանդական շագանակագույն, սև կամ սպիտակ մոդելներից մինչև վառ կարմիր, սպորտային դետալներով ու մետաղական աքսեսուարներով մոդելներ:

Պայուսակներ

Ժամանակակից տղամարդիկ ոչ պակաս ուշադրություն են դարձնում իրենց արտաքինին, քան կանայք, և նրանց կերպարի անբաժանելի մասն այսօր նորաձև պայուսակն է: Իհարկե, տղամարդկանց մեծամասնության համար գերակա նշանակություն ունի պայուսակի ֆունկցիոնալությունը, ուստի մոդելները հենց այդպիսին են՝ դասականից մինչև կլատչեր, ուսապարկից մինչև պորտֆելներ ու ճամպրուկներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ,
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ 2

2020 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 3

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է
ՄՇՏԱՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻՑ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ 16

ԶԳՈՒՇԱՑԵՔ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՑ 20

ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ..... 22

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ 24

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԸ ԵՎ ԿԱՐՏՈՖԻԼԸ՝
ԱՌՕՐՅԱ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ ՀԻՄՔ 25

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՄՍԱՄԹԵՐՔ..... 26

ԵԶՆԱՐԳԵԼ ԴԱԾՏԱՅԻՆ 27

ԻՆՔՆԱԹԻՌՈՒՄ ԿԱՄ ՕԴԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ 28

ԱՄԱՌ 2020 30

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:http//www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է



Սպառողների ազգային ասոցիացիան իր գործունեության ընթացքում սպառողների շրջանում մշտապես կատարել և կատարում է հարցումներ (գրավոր, հեռախոսային, առցանց և այլն) ներքնային գազասպառման, գազի և ջրի մատակարարման, էլեկտրաէներգիայի, հեռախոսային, առևտրային և այլ ծառայությունների վերաբերյալ, որոնց արդյունքները պարբերաբար ներկայացվում են ՍՊԱՌՈՂ ամսագրի համարներում կամ հեռուստառադիոեթերների ժամանակ:

Ստորև ներկայացվում են Սպառողների ազգային ասոցիացիայի կողմից կատարված՝ ներտնային գազասպասարկման վերաբերյալ սոցհարցման արդյունքները 2020 թ. առաջին կիսամյակի համար:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԳԱԶԱՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

(ԱՅՑԵՐԻ ԹԻՎԸ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՎԱԾՆԵՐ 853



ԳՈ՞Հ ԵՔ ԳԱԶԱՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՎԱԾՆԵՐ 853



ԳԱԶԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԻՄԱՑ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵ՞Լ ԵՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՎԱԾՆԵՐ 853

ԷՅ·Ի·ՋԻ·ՍԵՐՎԻՍ

AEG SERVICE

- Բնակարանների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում:
- Կենցաղային օբյեկտների տեխնիկական սպասարկում:
- Արտադրական նշանակության օբյեկտների տեխնիկական սպասարկում:
- Գազօգտագործող սարքավորումների վերանորոգում և կարգաբերում:

- Գազափնտրիչ սարքերի արտադրություն (LD-1M):

- Ձայնաազդանշանային անվտանգության համակարգի վերանորոգում:

- Ընկերության աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում:

Մեր աշխատանքը Ձեր անվտանգության երաշխիքն է

ՀՀ, 0021, ք. Երևան, Ադոնցի 10
Հեռ.՝ +374 10 20 94 60
Ֆաքս՝ +374 10 23 65 01
Էլ.փոստ՝ aeg@aegservice.am
Կայք՝ www.aegservice.am

www.armconsumer.am